ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
Հատոր 2, համար 2, 2008թ.
www.ysmu.am

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԱՆԸՆԴՄԻՋԵԼԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՕՂԱԿԻ ՈՐԱԿԻ ԵՐԱՇԽԻՔ

Նարիմանյան Մ. Զ., Մարգարյան Ա. Գ.

Երևանի Մ. Հերացու անվ. պետ. բժշկական համալսարանի ընտանեկան բժշկության ամբիոն, Երևան, Հայաստան

Ընտանեկան բժիշկն ավելի լայն ծավալով գործ ունի խնամյալի և հիմնախնդիրների հետ, քան ցանկացած այլ բժշկական մասնագետ:

Ընտանեկան բժիշկի պատասխանատվությունը պահանջում է, որպեսզի նա զարգացնի և պահպանի իր գիտելիքները, հմտություններն ու վերաբերմունքը, որոնք անհրաժեշտ են իր աշխատանքի համար: Որպեսզի ընտանեկան բժիշկը ընդունակ լինի կատարելու իր աշխատանքը բավարար մակարդակով, նա պետք է ստանա համապատասխան մասնագիտական ծրագրերի ուսուցում: Այդ նպատակով, ընտանեկան բժշկության հետդիպլոմային կրթության գործընթացի համար ստեղծված է միասնականացված ուսումնական ծրագիր, որը նպատակաուղղված է ընտանեկան բժշկի ֆունկցիաները կատարելու պատրաստակամ կադրերի պատրաստմանը: Վ երապատրաստման կուրսերի արդյունքում, բժիշկները բարելավում են իրենց ամբուլատոր խնամյալների սովորական վիճակների գնահատման կարողությունները, հետևում կլինիկական ցուցումներով քրոնիկ հիվանդությունների վարմանը, հիվանդների արդյունավետ բուժմանը, կիրառելով ապացուցված բժշկության սկզբունքները:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY